ԱՐՏԱԲՈՒՅՆՔ

Բնակավայրի վարչական ղեկավար՝ Արմեն Սետրակյան

Հեռախոս՝ +374 94.895807

Բնակչություն՝ 1075

Համայնքի վարչական տարածքը համապատասխանում է Արտաբույնք գյուղին: Այն գտնվում է Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի շրջանում՝ Եղեգնաձոր-Սելիմ մայրուղու հյուսիս-արևելյան մասում: Հեռավորությունը մարզկենտրոն Եղեգնաձոր քաղաքից 17 կմ է, հանրապետական նշանակության ճանապարհից՝ 6 կմ: Համայնքը հյուսիսից սահմանակից է Հորբատեղի գյուղական համայնքին, հարավից՝ Շատինի գյուղական համայնքին, արևելքից՝ Եղեգիսի գյուղական համայնքին և արևմուտքից՝ Սալլիի գյուղական համայնքին: Գյուղի անվան հետ առնչվող գրառումները հայ պատմագրության մեջ հիշատակվում է 5-րդ դարից: Մինչև 1946թ. գյուղը կոչվել է Էրդափին, այնուհետև Եղեգիս: Եղեգիս գյուղի 1500-ից ավելի տարիների գոյության փաստը անժխտելի է: 1828թ. Խոյ գավառից թվով 38 ընտանիք վերահաստատվում է Էրդափին գյուղում: Գյուղի միջով հոսում է Եղեգիս գետի Էլեգիս վտակը: Գյուղի արևելյան կողմում բարձրանում է հսկա լեռնային պատնեշը, որի վրա գտնվում է Սմբատաբերդ ամրոցը որը կառուցվել է 12-րդ դարում և եղել է Օրբելյանների ոստանը: Բերդը կոչվել է Սյունյաց տան իշխան Սմբատի անունով: Սմբատաբերդից հյուսիս-արևմուտք գտնվում է Ցախացքար եկեղեցու համալիրը, որը կառուցվել է Աբբաս Բագրատունու օրոք 10-րդ դարում: Գյուղը գտնվում է ծովի մակերևույթից 1700մ բարձրության վրա: Կլիման ձմռանը ցրտաշունչ է, ամռանը՝ զով:Հաճախակի են չորային, երաշտի տարիները: Գյուղից վերև բարձրաբերձ գագաթներով սարեր են, որոնց լանջերից բխող աղբյուրները խմելու և ոռոգման ջուր են մատակարարում գյուղին:
Գյուղում գործում է միջնակարգ դպրոց, բուժկետ, կապի հանգույց: Գյուղի տնտեսության գլխավոր ճյուղը գյուղատնտեսությունն է: Հիմնականում զբաղվում են հողագործությամբ և անասնապահությամբ: Արոտավայրերը զբաղեցնում են 1136.8 հա տարածք, վարելահողերը՝ 6.9 հա, խոտհարքերը՝ 197 հա: